ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2878/02/24 ք. Երևան
26 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Գայանե Մազմանյանի, ծանոթանալով «ՎիժնԼաբս» ՍՊ ընկերության, «ԶԵՐՈ-ԼԱՆ» ՍՊ ընկերության, «ՍՈՖՏՆԵՏՍՈՐՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀՀ Ներքին գործերի նախարարություն» ՝ Ելնելով վերը նշվածներից ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔԱՆվավեր ճանաչել՝ ԵՄԱՊԶԲ-05/2024/ՏՏԿՎ ընթացակարգի ծածկագրով նախաորակավորման գնահատման հանձնաժողովի 2024թ. ապրիլի 3-ի թիվ 5 արձանագրության եզրափակիչ մասի 2-րդ կետով կայացրած որոշումը՝ «ՍոֆտՆետՍորս» ՍՊԸ, «Զերո-Լան» ՍՊԸ, «ՎիժնԼաբս» ՍՊԸ (կոսորցիումի) հայտն անբավարար գնահատելու մասին: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ՎիժնԼաբս» ընկերության, «ԶԵՐՈ-ԼԱՆ» ՍՊ ընկերության, «ՍՈՖՏՆԵՏՍՈՐՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Պողոսյանը 15.04.2024թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարության՝ թիվ «ԵՄԱՊԶԲ-05/2024/ՏՏԿՎ» ընթացակարգի ծածկագրով նախաորակավորման գնահատման հանձնաժողովի՝ 03.04.2024թ. թիվ 5 արձանագրության եզրափակիչ մասի 2-րդ կետով կայացրած

որոշումը՝ «ՍոֆտՆետՍորս» ՍՊԸ-ի, «Զերո-Լան» ՍՊԸ-ի, «ՎիժՆԼաբս» ՍՊԸ-ի (կոսորցիումի) հայտն անբավարար գնահատելու մասին, անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 16.04.2024թ.:
Դատարանի՝ 19.04.2024թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:
«ՎիժՆԼաբս» ընկերության, «ԶԵՐՈ-ԼԱՆ» ՍՊ ընկերության, «ՍՈՖՏՆԵՏՍՈՐՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Աշոտ Պողոսյանը, հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո, 23.04.2024թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:
Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 23.04.2024թ.:
Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:
Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը.

ՈՐՈՇԵՑ

Հայցադիմումն ընդունել վարույթ:
Գործի քննության արդյունքում կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ 24.05.2024 թվականին:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Գայանե Մազմանյան

Digitally signed by MAZMANYAN GAYANE 6205680386
Date: 2024.04.26 16:41:10 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am